դըմբոյը սպանում է իրերի ռիթմը, կլանում առարկաների պտոյտը նախատեսող զգացումը, մարդկային էութիւնը իրի վերածում եւ առանձնացնում

Քաղաքը տիրում է գիւղերի վրայ: Արհեստական մի կեանք տանիքների վրայ գալարում է պողպատէ իր թեւերը: Երկաթը կըրճրտում է եւ լծակները ակռայ են սեղմում: Գործարանները արագացնում են արտադրութիւնը եւ մարդիկ մեքենաների մաս են դառնում: Տայլորեան դրութեամբ բոլոր ժեստերը հաշուած են, եւ կամքերը մեքենայցրած: Արտադրութեան ետեւից վազող այդ կոյր թափը, բնութեան վրայ գործ ածուած այդ ահաւոր բռնութիւնը պատմութեան մէջ չտեսնուած մի գերութիւն է ստեղծել: Աստուած սոսկումով հեռանում է աշխարհից եւ ժողովուրդները, մահուան դէմ ամենօրեայ պայքար մղելով, խենթանում են միայնութեան անդնդի եզերքին ու իրենց կտոր կտոր մսերը քարշ տալիս՝ չափազանցուած, ջղային եւ անմիտ գործունէութեան կրկէսի մէջ:

Արուեստը քայլ առ քայլ հետեւում է մարդկութեան խօլական այդ թափին: Անհունը ու նրա թաքնուած երաժշտութիւնը լսելու կարողութիւնը կորած է: Սկզբնատիպ կշռոյթը, որը տաղի եւ գոյնի լաւագոյն մթնոլորտն էր կազմում եւ իմաստը, արտաքին հնչականութեան տակ այլեւս ոչ ոքի համար լսելի չէ: Բանաստեղծութիւնը գործարանի հսկայ ծըխնելոյզի վրայ վայր ընկած սաւառնակի է նըմանում: Նկարչութիւնը, ենթարկուելով դարի բնազդին, տարբաղադրում է իրերը եւ բնութիւնը: Երաժշտութիւնը ձայների քիմիական վերլուծման մէջ նոր ներդաշնակութիւններ է փնտռում եւ ստեղծագործական իր բնոյթից անցնում է նմանողականի:

Անստոյգ ներկան խուսափում է, եւ ամէն արուեստագէտ երազում է ապագայի մասին:

Կրօնքը օրէ օր այլափոխւում է:

Խորհրդանշանական իր բնոյթը դարձել է պրագմատիկ: Կրօնքը ի սպաս է դնում երկինքը ընկերութեան եւ նրա տնտեսական կազմակերպութիւններին: Խոնարհ եւ ծառայելու պատրաստ, նա կառչում է պետութիւնների քաղաքական նպատակներին, որպէսզի կարողանայ իր գոյութիւնը պաշտպանել: Արդի աստուածաբանութիւնը ուզում է հաշտուել տիրող գիտութեան հետ, ուրանում է իր անցեալը, հաշիւ է անում, ապացուցում է, եւ Ֆորտին աջակցում է ինքնաշարժեր շինելու:

Բողոքականութիւնը Աւետարանի մէջ տընտեսական գործողութիւնների բարոյականն է փնտռում: Վաճառականութեան իմաստը վերլուծելով դիւրին կերպով հարստանալու ձեւն է սորվեցնում: Աստուածային գիտութիւնը, գործնական հոգեբանութեան աշխատանոցների մէջ, քննում է, զննում, ու, ամերիկեան, այսպէս ասուած, վօլօնտարիստ փիլիսոփայութեան մատչելի կարգապահութեան վերածում: Հրեշտակների թեւերը չափում են եւ երկնքի ստուերներում քիմիական բաղադրութիւններ են որոնում:

Պապը, կայսերապաշտական իր գահի վըրայից, Ս. Թոմասի փիլիսոփայութիւնը յայտարարում է միակ ճշմարիտը ու արեւելեան քրիստոնէութիւնը հլու ծառան է դարձնում արեւմտեան ցեղային եւ գոռոզ պետական մտքի:

Աստուածաշունչը շարժական պատկերների հոյակապ նիւթ է դառնում, եւ Կարմիր ծովի անցքը հրեայ բեմավարների երեւակայութիւնն է գրգռում:

Աւետարանը այլեւս մատերը այրող հսկայ այն գիրքը չէ, որ հոգիները լուսաւորում էր եւ անհունը բուրվառում, այլ գրական յաջողութիւն ձեռք բերելու մի նիւթ, որի շուրջը Պապինին կարող է մարզել իր ստեղծագործական թափը:

Կեանքի միութիւնը հեռաւոր յիշատակ է եւ լաւագոյն պարագային նախազգացում: Ամէն ինչ մասնագիտուած է, դասաւորուած, զատուած եւ փոքրացած: Աստղերի վրայ ճերմակ թղթեր են կպցրել եւ թիւեր դրել: Անհունը պատռուել է:

Զգացումները արտայայտւում են մարմնի մէկ մասով, եւ հոգին ծիւրացել է, որովհետեւ մնում է անշարժ:

* * *

Արդի դրամատիրական դասակարգը, կասկած չկայ, կարողացել է հիանալիօրէն քաղաքակրթութիւնը իր դագաթնակէտին

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան